*<u>ՆԱԽԱԳԻԾ</u>*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

<<--->> <<-------------->> 2009թ. N --- - Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ, ԾԱԽՍԵՐԸ ՈՒ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ) ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ կետով, 73-րդ հոդվածի 24 կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 28.2-րդ հոդվածի 2-րդ կետի գ/ ենթակետով և 33-րդ հոդվածի 4-րդ կետով Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի <<Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի մասին>> N 2-Ա որոշմամբ հաստատված եկամուտների գումարն ավելացնել 2,988.7 հազ. դրամով, ծախսերի գումարն ավելացնել 83,988.7 հազ. դրամով, դեֆիցիտի (պակասուրդի) գումարն ավելացնել 81,000.0 հազ. դրամով:

2. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի <<Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի մասին>> N 2-Ա որոշմամբ NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածներում կատարել վերաբաշխում և փոփոխություններ՝ համաձայն համապատասխանաբար NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածների:

3. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի <<Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի մասին>> N 2-Ա որոշման N 7 հավելվածի NN 1, 5, 10, 11 և 12 աղյուսակներում կատարել փոփոխություններ համաձայն N 7 հավելվածի:

4. Հաստատել Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեով սույն որոշմամբ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 09 բաժնի 6 խմբի 1 դասով և տնտեսագիտական դասակարգման <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> հոդվածով նախատեսված ծախսերի բաշխումը՝ ըստ Երևան քաղաքի դպրոցների՝ համաձայն N 8 հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ, ԾԱԽՍԵՐԸ ՈՒ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ) ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի Երևանի քաղաքապետարանի (առանց վարչական շրջանների) ծախսերի մասով Երևանի ավագանու որոշման նախագծով նախատեսվում է ավելացնել հետևյալ ծրագրերը.

- Երևան քաղաքում տեղի ունեցած ուժգին քամիների հետևանքով մի շարք դպրոցների /թվով 19/ շենքերի վնասները վերականգնելու համար Երևանի քաղաքապետարանի կողմից պատվիրվել են աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթեր: Նշված 19-ը դպրոցներից 7-ը, դպրոցի խնայված միջոցների հաշվին, վերականգնել են վնասները, իսկ թվով 12 դպրոցների շենքերի վնասների վերականգնման ընդհանուր նախահաշվային արժեքը կազմում է 55,672.4 հազ. դրամ: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև նշված դպրոցներում դասապրոցեսի բնականոն գործունեությունը վերականգնելու նպատակով, որոշման նախագծով առաջարկվում է 55,672.4 հազ. դրամ հատկացնել դպրոցների վնասները վերականգնելու աշխատանքներն իրականացնելու համար:
- <<Էրեբունի>> հնագիտական թանգարանի արտաքին աստիճանները և բազրիքները երկար ժամանակ վերանորոգման չեն ենթարկվել և ներկայումս խիստ վերանորոգման կարիք ունեն, ինչի նպատակով, ինչպես նաև տոնակատարություններին և թանգարանի այցելուներին պատշաճ կերպով ներկայանալու համար, <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ի կողմից մշակվել են աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, համաձայն որոնց աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 37,459.0 հազ. դրամ: Սույն որոշման նախագծով նախատեսվում է աշխատանքների իրականացման համար հատկացնել 37,459.0 հազ. դրամ:

**Վերը նշված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախագծով նախատեսվել են հետևյալ փոփոխությունները.**

- Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեով Երևանի քաղաքապետարանի (առանց վարչական շրջանների) ծախսերի մասով <<Երևան քաղաքում թվով 283 ՀՀ դրոշների տեղադրման աշխատանքների համար>> նախատեսված էր 91,000.0 հազ. դրամ, որի ձեռքբերման համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվել է աշխատանքների գնման պայմանագիր, ինչը հետագայում լուծվել է, հաշվի առնելով դրանց ոչ առաջնահերթությունը: Նշված գումարներից սույն որոշման նախագծով նախատեսվում է նվազեցնել 12,131.4 հազ. դրամ և ուղղել վերոգրյալ ծախսերին:
- Միաժամանակ, Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 28.2-րդ հոդվածի 2-րդ մասի <<գ>> կետի նախապատրաստվել, ՀՀ ֆինանսների նախարարության հետ համաձայնեցվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ՀՀ կառավարության <<Գումար հատկացնելու մասին>> որոշման նախագիծ, համաձայն որի նախատեսվում է Երևանի վարչական տարածքում տեղաբաշխված՝ պետական սեփականություն հանդիսացող գույքի մասնավորեցումից՝ Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված հատուկ հաշվում կուտակված միջոցների մնացորդից 81,000.0 հազ. դրամի չափով հատկացնել Երևանի քաղաքապետարանին: Նշված միջոցները համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 28.2-րդ հոդվածի 2-րդ կետի Երևանի բյուջեի համար դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցներ են, որն էլ ուղղվելու է վերոգրյալ ծրագրերի իրականացմանը:

2. Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի Դավթաշեն վարչական շրջանի մասով. ասֆալտապատման աշխատանքների իրականացման համար նախատեսված միջոցներից նախատեսվում է պակասեցնել 17,000.0 հազ. դրամ, քանի որ մինչև տարեվերջ վարչական շրջանի մասով ասֆալտապատման աշխատանքներն այլևս չեն նախատեսվում, իսկ տոնակատարությունների անցկացման համար

նախատեսված միջոցներից առաջարկվում է նվազեցնել 3,122.3 հազ. դրամ՝ առաջացած խնայողությունների չափով:

**Նշված ծախսային ուղղությունների նվազեցման հաշվին նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.**

- 850.0 հազ դրամ հատկացնել Դավթաշեն վարչական շրջանի Ավետ Տերտերյանի անվան երաժշտական դպրոցում սովորող ծնողազուրկ, զոհված ազատամարտիկների երեխաների ուսման վարձի փոխհատուցման նպատակով.
- 19,272.3 հազ. դրամ հատկացնել Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման համար, որոնք փաստացի կատարվել են, սակայն չեն ֆինանսավորվել, քանի որ դրանց ֆինանսավորումը նախատեսված էր ֆոնդային մուտքերի հաշվին (օտարումներից մուտքեր), ինչը նախկին թաղային համայնքի կողմից չի ապահովվել:

3. Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի Նորք-Մարաշ վարչական շրջանի մասով արտաքին լուսավորության ցանցի վերանորոգման համար նախատեսված գումարներից նախատեսվում է նվազեցնել 8,055.0 հազ. դրամի չափով, հաշվի առնելով ՀՀ 2009 թվականի բյուջեով նախատեսված միջոցների հաշվին Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացված մեծածավալ աշխատանքները: Միաժամանակ, գործառական դասակարգման 09 բաժնի 5 խմբի 1 դասով և տնտեսագիտական դասակարգման <<Ներքին գործուղումներ>>, <<Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում>>, <<Հատուկ նպատակային այլ նյութեր>> հոդվածներով նախատեսված գումարներից նախատեսվում է նվազեցնել 1,268.0 հազ. դրամ՝ առաջացած տնտեսումների չափով:

**Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի մասով վերոգրյալ նվազեցումների հաշվին նախատեսվում է ավելացնել հետևյալ ծրագրերը.**

- 3,654.1 հազ. դրամ՝ Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեով նախատեսվող կապիտալ բնույթի ծախսերի պլանավորման նպատակով՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման համար,

- 1,900.9 հազ. դրամ՝ վարչական շրջանի տարածքներում առկա չոր և վթարային ծառերի հատման և էտման համար,
- 3,300.0 հազ. դրամ՝ Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի բաժինները համակարգչային տեխնիկայով և գրասենյակային կահույքով համալրելու նպատակով անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար,
- 200.0 հազ. դրամ՝ պարտադիր վճարների հետ կապված ծախսեր իրականացնելու համար,
- 68,0 հազ. դրամ՝ գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով,
- 200.0 հազ. դրամ՝ վարչական շրջանի թիվ 1 մարզադպրոցին գրասենյակային գույքով ապահովելու համար:

**4. Նուբարաշեն վարչական շրջանի մասով նախատեսվում է.**

- ներկայացուցչական ծախսերի համար նախատեսված գումարներից պակասացնել 200.0 հազ. դրամ և ավելացնել գրասենյակային նյութերի ձեռքբերման համար,
- Էրեբունի-Երևան տոնակատարություններն այս տարի շքեղ կազմակերպելու արդյունքում տոնակատարությունների և միջոցառումների կազմակերպման համար նախատեսված գումարները ամբողջությամբ ծախսվել են, ուստի Ամանորի միջոցառումներին նախապատրաստվելու համար 1,160.3 հազ. դրամ սույն որոշման նախագծով ավելացվում է նշված ծրագրին ինչն էլ նվազեցվում է հետևյալ ծախսային ուղղություններից.
- **կառավարչական ծառայություններից /բաժին 01, խումբ 1, դաս 1/՝ 300.0 հազ. դրամ, ինչն անհրաժեշտ ծախսերից ավելի էր պլանավորել,**
- **ընդհանուր բնույթի այլ ծառայություններից /բաժին 10, խումբ 9, դաս 1/՝ 429.7 հազ. դրամ, քանի որ մինչև տարեվերջ այլ ծախսեր չեն նախատեսվում,**
- **ընդհանուր բնույթի հանրային ծառայություններից /բաժին 01, խումբ 6, դաս 1/՝ 430.6 հազ. դրամ, քանի որ տվյալ ծախսային ուղղությամբ այլ ծախսեր չեն նախատեսվում:**

- **Վթարներից և եղանակային անբարենպաստ պայմաններից առաջացած վնասները վերացնելու համար արտաքին լուսավորության աշխատանքների համար սույն որոշման նախագծով ավելացվում է 1300.0 հազ. դրամ որից՝**
- **348.0 հազ. դրամը՝ ճանապարհային տրանսպորտից /բաժին 04, խումբ 5, դաս 1/,**
- **952.0 հազ. դրամը՝ Կոմունալ ծառայություններից /բաժին 06, խումբ 1, դաս 1/, քանի որ ոռոգման ջրի հետ կապված սեզոնային աշխատանքներն ավարտված են:**

**5. Շենգավիթ վարչական շրջանի մասով նախատեսվում է.**

- ընդհանուր բնույթի այլ ծառայությունների համար / բաժին 01, խումբ 1, դաս 1/ Երևան քաղաքի 2009 թվականի Շենգավիթ վարչական շրջանի մասով նախատեսվել է 8,340.0 հազ. դրամ, և քանի որ արդեն իսկ հստակեցվել է մինչև տարեվերջ կատարվող ծախսերի ծավալը, ուստի բյուջետային ծախսերի տվյալ տնտեսագիտական դասակարգման հոդվածով առկա ազատ միջոցները՝ որը կազմում է 2,752.7 հազ. դրամ որոշման նախագծով առաջարկվում է պակասեցնել,
- նախկին թաղային համայնքի բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների սեփականաշնորհման գործընթացի կազմակերպման և իրականացման համար նախատեսված 3,000.0 հազ. դրամի շրջանակներում կնքվել է 1,500.0 հազ. դրամի պայմանագիր: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ ներկայիս կարգավիճակում նմանատիպ ծախսերի անհրաժեշտությունը դադարել է, որոշման նախագծով մնացած 1,500.0 հազ. դրամը նվազեցվում է,
- բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի, 6 խմբի, 1 դասի <<Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին>> հոդվածով նախատեսվել էր 45,000.0 հազ. դրամ, հաշվի առնելով համապատասխան կազմակերպությունների կողմից ստանձված առկա պարտավորությունների ծավալները սույն որոշման

նախագծով առաջարկվում է 27,822.3 հազ. դրամ պակասեցնել տվյալ ծախսային ուղղությունից,

- ասֆալտապատման աշխատանքների համար բյուջեով նախատեսվել էր 70,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում կատարված փաստացի ծախսը կազմում է 15,000.0 հազ. դրամ, ինչպես նաև հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի կողմից ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով կատարված մեծածավալ աշխատանքները, սույն որոշման նախագծով տվյալ ծախսային ուղղությունը նվազեցվում է 18,667.2 հազ դրամով,
- բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված գումարներից նվազեցվում է 1,500.0 հազ. դրամ, տվյալ ծախսային ուղղության առաջնահերթ չլինելու պատճառով,
- վարչական շրջանի մասով հաստատված ֆոնդային ծախսերի ֆինանսավորման համար միջոցները նախատեսվել էր իրականացնել ֆոնդային մուտքերի հաշվին (օտարումներից մուտքեր), սակայն նշված մուտքերը նախատեսված չափով չեն ապահովվել, ուստի վարչական շրջանի կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունները կատարելու համար, մասնավորապես՝ բակերի բարեկարգման, բնակելի ֆոնդի վերանորոգման, ինչպես նաև մանկապարտեզների ջրագծերի և կոյուղագծերի, տանիքների վերանորոգման աշխատանքների ֆինանսավորումը, ընդամենը՝ 52,242.2 հազ. դրամի չափով նախատեսվում է իրականացնել Շենգավիթ վարչական շրջանի մասով վերոգրյալ վարչական ծախսերի նվազեցումների հաշվին:

Միաժամանակ, Նոր Նորք վարչական շրջանի մասով <<Վարձատրվող հասարակական աշխատանքներ>> ծրագրի շրջանակներում բյուջեի եկամտային մասում մուտքեր չէին նախատեսվել, սակայն փաստացի մուտքերի առկայությամբ ծախսերը նախատեսվել և իրականացվել են: Հաշվի առնելով նշվածը նախագծով նախատեսվում է ավելացնել բյուջեի եկամտային մասը 2,988.7 հազ. դրամով՝ ծախսային հատվածում այն ուղղելով պահուստային ֆոնդին:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի <<Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի մասին>> N 2-Ա որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

**Հավելված N 1**

**Երևանի ավագանու 2009 թվականի**
**--------- N ---- -Ա որոշման**

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ 6-Ի N 2-Ա ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդված ի NN | Ընդամենը | այդ թվում` | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| **1000** | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | | **2 988,7** | **2 988,7** | **78 668,6** |
| | այդ թվում[a] | | | | |
| **1300** | **3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | **7400** | **2 988,7** | **2 988,7** | **78 668,6** |
| | այդ թվում` | | | | |
| **1390** | **3.9 Այլ եկամուտներ** | **7451** | **2 988,7** | **2 988,7** | **78 668,6** |
| | այդ թվում` | | | | |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | - | - | 78 668,6 |
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված` համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | | 2 988,7 | 2 988,7 | - |

Հավելված N 2

Երևանի ավագանու 2009 թվականի
--------- N ---- -Ա որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ 6-Ի N 2-Ա ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը | այդ թվում` | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 7 | 8 | 9 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | **83 988,7** | **2 988,7** | **159 668,6** |
| 2100 | **01** | **0** | **0** | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | **(25 583,5)** | **(32 537,6)** | **6 954,1** |
| | | | | այդ թվում` | | | |
| 2110 | **01** | **1** | **0** | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ* | **4 169,4** | **(2 784,7)** | **6 954,1** |
| | | | | որից` | | | |
| 2111 | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 4 169,4 | (2 784,7) | 6 954,1 |
| 2160 | **01** | **6** | **0** | *Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)* | **(29 752,9)** | **(29 752,9)** | - |
| | | | | որից` | | | |
| 2161 | 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | (29 752,9) | (29 752,9) | - |
| 2400 | **04** | **0** | **0** | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | **(48 146,6)** | **(36 015,2)** | **(12 131,4)** |
| | | | | այդ թվում` | | | |
| 2450 | **04** | **5** | **0** | *Տրանսպորտ* | **(36 015,2)** | **(36 015,2)** | - |
| | | | | որից` | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | (36 015,2) | (36 015,2) | - |
| 2490 | **04** | **9** | **0** | *Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)* | **(12 131,4)** | - | **(12 131,4)** |
| | | | | որից` | | | |
| 2491 | 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | (12 131,4) | - | (12 131,4) |
| 2500 | **05** | **0** | **0** | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | **1 900,9** | **1 900,9** | - |
| | | | | այդ թվում` | | | |
| 2560 | **05** | **6** | **0** | *Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)* | **1 900,9** | **1 900,9** | - |
| | | | | որից` | | | |
| 2561 | 05 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | 1 900,9 | 1 900,9 | - |
| 2600 | **06** | **0** | **0** | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | **23 807,5** | **(7 707,0)** | **31 514,5** |
| | | | | այդ թվում` | | | |
| 2610 | **06** | **1** | **0** | *Բնակարանային շինարարություն* | **(952,0)** | **(952,0)** | - |
| | | | | որից` | | | |
| 2611 | 06 | 1 | 1 | Բնակարանային շինարարություն | (952,0) | (952,0) | - |
| 2640 | **06** | **4** | **0** | *Փողոցների լուսավորում* | **(6 755,0)** | **(6 755,0)** | - |
| | | | | որից` | | | |
| 2641 | 06 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | (6 755,0) | (6 755,0) | - |
| 2660 | **06** | **6** | **0** | *Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)* | **31 514,5** | - | **31 514,5** |
| | | | | որից` | | | |
| 2661 | 06 | 6 | 1 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 31 514,5 | - | 31 514,5 |
| 2800 | **08** | **0** | **0** | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | **35 497,0** | **(1 962,0)** | **37 459,0** |
| | | | | այդ թվում` | | | |
| 2820 | **08** | **2** | **0** | *Մշակութային ծառայություններ* | **35 497,0** | **(1 962,0)** | **37 459,0** |
| | | | | որից` | | | |
| 2822 | 08 | 2 | 2 | Թանգարաններ և ցուցասրահներ | 37 459,0 | - | 37 459,0 |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **7** | **8** | **9** |
| 2824 | 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | (1 962,0) | (1 962,0) | - |
| 2900 | **09** | **0** | **0** | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | **95 454,4** | **(418,0)** | **95 872,4** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2910 | **09** | **1** | **0** | *Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն* | **40 000,0** | **-** | **40 000,0** |
| | | | | որից՝ | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 40 000,0 | - | 40 000,0 |
| 2950 | **09** | **5** | **0** | *Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն* | **(218,0)** | **(418,0)** | **200,0** |
| | | | | որից՝ | | | |
| 2951 | 09 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | (218,0) | (418,0) | 200,0 |
| 2960 | **09** | **6** | **0** | *Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ* | **55 672,4** | **-** | **55 672,4** |
| | | | | որից՝ | | | |
| 2961 | 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | 55 672,4 | - | 55 672,4 |
| 3000 | **10** | **0** | **0** | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | **(1 929,7)** | **(1 929,7)** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 3070 | **10** | **7** | **0** | *Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)* | **(1 500,0)** | **(1 500,0)** | **-** |
| | | | | որից՝ | | | |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | (1 500,0) | (1 500,0) | - |
| 3090 | **10** | **9** | **0** | *Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)* | **(429,7)** | **(429,7)** | **-** |
| | | | | որից՝ | | | |
| 3091 | 10 | 9 | 1 | Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին | **(429,7)** | **(429,7)** | - |
| 3100 | **11** | **0** | **0** | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | **2 988,7** | **81 657,3** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ* | **2 988,7** | **81 657,3** | **-** |
| | | | | որից՝ | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | **2 988,7** | **81 657,3** | - |

Հավելված N 3
Երևանի ավագանու 2009
թվականի
--------- N ---- -Ա որոշման

# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ 6-Ի N 2-Ա ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը | այդ թվում` | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | **83 988,7** | **2 988,7** | **159 668,6** |
| | այդ թվում` | | | | |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐª | x | **(75 679,9)** | **2 988,7** | - |
| | այդ թվում` | | | | |
| 4200 | **1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ** | x | **(50 396,3)** | **(50 396,3)** | - |
| | այդ թվում` | | | | |
| 4210 | *ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ* | x | 948,9 | 948,9 | - |
| | որից` | | | | |
| 4213 | -Կոմունալ ծառայություններ | **4213** | 948,9 | 948,9 | - |
| 4220 | *ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ* | x | (200,0) | (200,0) | - |
| | որից` | | | | |
| 4221 | -Ներքին գործուղումներ | **4221** | (200,0) | (200,0) | - |
| 4230 | *ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ* | x | (5 644,4) | (5 644,4) | - |
| | որից` | | | | |
| 4235 | -Կառավարչական ծառայություններ | **4235** | (300,0) | (300,0) | - |
| 4237 | -Ներկայացուցչական ծախսեր | **4237** | (200,0) | (200,0) | - |
| 4238 | -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | **4239** | (5 144,4) | (5 144,4) | - |
| 4240 | *ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ* | x | (1 930,6) | (1 930,6) | - |
| | որից` | | | | - |
| 4241 | -Մասնագիտական ծառայություններ | **4241** | (1 930,6) | (1 930,6) | - |
| 4250 | *ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր)* | x | (43 570,2) | (43 570,2) | - |
| | որից` | | | | |
| 4251 | -Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | **4251** | (43 570,2) | (43 570,2) | - |
| 4260 | *ՆՅՈՒԹԵՐ* | x | - | - | - |
| | որից` | | | | |
| 4261 | -Գրասենյակային նյութեր և հագուստ | **4261** | 268,0 | 268,0 | - |
| 4268 | -Հատուկ նպատակային այլ նյութեր | **4269** | (268,0) | (268,0) | - |
| 4500 | **1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** | x | **(26 972,3)** | **(26 972,3)** | - |
| | այդ թվում` | | | | |
| 4530 | *ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ* | x | (26 972,3) | (26 972,3) | - |
| | որից` | | | | |
| 4531 | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | **4637** | (26 972,3) | (26 972,3) | - |
| | որից` | | | | |
| 4600 | ***1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ*** | x | (1 500,0) | (1 500,0) | - |
| | այդ թվում` | | | | |
| 4630 | *ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ)* | x | (1 500,0) | (1 500,0) | - |
| | որից` | | | | |
| 4635 | -Այլ նպաստներ բյուջեից | **4729** | (1 500,0) | (1 500,0) | - |
| 4700 | ***1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*** | x | **3 188,7** | **81 857,3** | - |
| | այդ թվում` | | | | |

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4720 | *ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ* | x | **200,0** | **200,0** | - |
| | որից՝ | | | | |
| 4723 | -Պարտադիր վճարներ | **4823** | 200,0 | 200,0 | - |
| 4770 | *ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ* | x | **2 988,7** | **81 657,3** | **-** |
| | որից՝ | | | | |
| 4771 | -Պահուստային միջոցներ | **4891** | 2 988,7 | 2 988,7 | - |
| 4772 | այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ | x | - | 78 668,6 | - |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ | x | **159 668,6** | **-** | **159 668,6** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5100 | **1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ** | x | **171 800,0** | - | **171 800,0** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5110 | *ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ* | x | 164 645,9 | - | 164 645,9 |
| | որից՝ | | | | |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | **5113** | 164 645,9 | - | 164 645,9 |
| 5120 | *ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ* | x | 3 500,0 | - | 3 500,0 |
| | որից՝ | | | | |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | **5122** | 3 500,0 | - | 3 500,0 |
| 5130 | *ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ* | x | 3 654,1 | - | 3 654,1 |
| | որից՝ | | | | |
| 5134 | - Նախագծահետազոտական ծախսեր | **5134** | 3 654,1 | - | 3 654,1 |
| 5200 | ***1.2 ՊԱՇԱՐՆԵՐ*** | x | **(12 131,4)** | - | **(12 131,4)** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5221 | - Նյութեր և պարագաներ | **5221** | (12 131,4) | | (12 131,4) |

Հավելված N 4

Երևանի ավագանու 2009 թվականի
--------- N ---- -Ա որոշման

# ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ 6-Ի N 2-Ա ՈՐՈՇՄԱՆ N 4 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | | Ընդամենը | այդ թվում` | |
|---|---|---|---|---|
| | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 8000 | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ) | **(81 000,0)** | **-** | **(81 000,0)** |

**Հավելված N 5**

**Երևանի ավագանու 2009**
**թվականի**
**--------- N ---- -Ա որոշման**

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ 6-Ի N 2-Ա ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | Ընդամենը | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումները | NN | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 8010 | **ԸՆԴԱՄԵՆԸ՝** | | **81 000,0** | **0,0** | **81 000,0** |
| | այդ թվում՝ | | | | |
| 8100 | Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | | 81 000,0 | 0,0 | 81 000,0 |
| | այդ թվում՝ | | | | |
| 8160 | *2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ* | | 81 000,0 | | 81 000,0 |
| | այդ թվում՝ | | | | |
| 8161 | 2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն | | 81 000,0 | | 81 000,0 |
| | որից՝ | | | | |
| 8163 | *- իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտք* | 9213 | 81 000,0 | | 81 000,0 |

Հավելված N 6

Երևանի ավագանու 2009 թվականի
--------- N ---- -Ա որոշման

## ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ 6-Ի N 2-Ա ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | 6 | **7** | **8** | **9** |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | **83 988,7** | **2 988,7** | **159 668,6** |
| 2100 | **01** | **0** | **0** | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | **(25 583,5)** | **(32 537,6)** | **6 954,1** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2110 | **01** | **1** | **0** | *Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ* | | **4 169,4** | **(2 784,7)** | **6 954,1** |
| | | | | որից՝ | | | | |
| 2111 | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | | 4 169,4 | (2 784,7) | 6 954,1 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | -Կառավարչական ծառայություններ | 4235 | (300,0) | (300,0) | - |
| | | | | -Ներկայացուցչական ծախսեր | 4237 | (200,0) | (200,0) | - |
| | | | | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | (2 752,7) | (2 752,7) | |
| | | | | -Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 268,0 | 268,0 | - |
| | | | | -Պարտադիր վճարներ | 4823 | 200,0 | 200,0 | - |
| | | | | - Վարչական սարքավորումներ | 5122 | 3 300,0 | - | 3 300,0 |
| | | | | - Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 3 654,1 | - | 3 654,1 |
| 2160 | **01** | **6** | **0** | *Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)* | | **(29 752,9)** | **(29 752,9)** | - |
| | | | | որից՝ | | | | |
| 2161 | 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | (29 752,9) | (29 752,9) | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | -Մասնագիտական ծառայություններ | 4241 | (1 930,6) | (1 930,6) | - |
| | | | | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | (27 822,3) | (27 822,3) | - |
| 2400 | **04** | **0** | **0** | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | **(48 146,6)** | **(36 015,2)** | **(12 131,4)** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2450 | **04** | **5** | **0** | *Տրանսպորտ* | | **(36 015,2)** | **(36 015,2)** | - |
| | | | | որից՝ | | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | | (36 015,2) | (36 015,2) | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | -Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և | 4251 | (36 015,2) | (36 015,2) | - |
| 2490 | **04** | **9** | **0** | *Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)* | | **(12 131,4)** | - | **(12 131,4)** |
| | | | | որից՝ | | | | |
| 2491 | 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | | (12 131,4) | - | (12 131,4) |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | -Նյութեր և պարագաներ | 5221 | (12 131,4) | - | (12 131,4) |
| 2500 | **05** | **0** | **0** | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | **1 900,9** | **1 900,9** | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2560 | **05** | **6** | **0** | *Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)* | | **1 900,9** | **1 900,9** | - |
| | | | | որից՝ | | | | |
| 2561 | 05 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | | 1 900,9 | 1 900,9 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |

